




Խ Մ Բ Ա Գ Ր Ա Կ Ա Ն

«ԼՈՒՅՍ, ԱՐԱՐԻ՛Չ ԼՈՒՍՈՅ, ԱՌԱՋԻՆ ԼՈՅՍ, ԾԱԳԵԱ Ի ՀՈԳԻՍ ՄԵՐ ԶԼՈՅՍ
ՔՈ ԻՄԱՆԱԼԻ»:

Մեծ պահքի միայն հատուկ արևագալի
ամերգության ընթացքում երգված ա. Ներ-
ես Ծնորհալու գրչին պատկանող շարակա-
լի այս սրտատուչ տողերը միշտ էլ խորհրդ-
ածությաննց նյութ են դարձել հավատացյա-
լի համար:

Արդարև հոգեգրավ, զմայլելի ու գեղեցիկ
արևագալի ժամերգությունը, իր աղոթքնե-
րով, մաղթանքներով, հոգևոր երգերով, և
իր հոգեշեն խորհրդով:

Եկեղեցական պաշտամունքի հիմքը ժա-
մերգությունն է:

Պաշտամունքը՝ հասարակաց աղոթքի
մնացույց և ընդհանրական այդ ձևը, ամբող-
ջությունն է կրոնական այն արարողությանց,
աղոթութեան, աղոթքի, երկրպագու-
թյան, որոնցով հավատացյալը «պաշտօն է
հատուցում», այսինքն պաշտում է Աստծուն:

Մեր եկեղեցական մատենագրության մեջ
Ծ դարի մեր մատենագիրների մոտ ժամեր-
գությունն այդ իմաստով էլ կոչվում է՝ **պաշ-
տօն եկեղեցույ, պաշտօն սաղմոսերգու-
թեան, հասարակաց պաշտօն, պաշտօն կա-
նոնի, կարգ պաշտաման, կարգք եկեղեցույ,**
ոչնչապես ա. Սահակի, Հովհ. Մանդակունու,
Երոթեմացու, Ղազար Փարպեցու մոտ: Օձնե-
ցին և Ծնորհալին գործածում են «պաշտօ-
նեցություն» բանաձևը: Այլ մատենագիրներ
և ժամակարգության մեկնիչներ՝ «ժամակար-
գություն» կամ «ժամապաշտություն» անվա-
նումը, որով եկեղեցին էլ՝ աղոթքի տունը,
կոչվում է ժամատուն, ժամատեղի: Մեր

այսօրվա ժամագրքի մեջ գործածված է
«Կարգաորություն հասարակաց աղոթից»
անվանումը, որը Գրիգոր Տաթևացու աշա-
կերտ, Մեծուիա վանքի վանահայր Թովմա
Մեծուիեցու կարգաղոթությունն է (տե՛ս Հ.
Վարդան Հացունի, «Պատմություն հայոց ա-
ղոթամատուցին», Վենետիկ, 1965, էջ 9—
10):

Հին Կտակարանում հասարակաց աղոթ-
քի «ժամեր»-ը երեքն էին. ըստ աղմոսնե-
րի վկայության՝ «Ես առ Աստուած կարդա-
ցի և Տէր լուսա ինձ յերեկոյս, ի վաղորդաց
և ի հասարակ ատուր (Սաղմ. ԾԴ. 18):

Իսկ անհատական աղոթքի ժամերը յոթն
էին՝ «Եթն անգամ ատուր օրհնեցից զքեզ»
(Սաղմ. Ծժը. 164):

Հասարակաց աղոթքը՝ ժամերգությունը,
քրիստոնեական եկեղեցում ծագում է առել
ստաբիլական դարից: Հասարակաց, միա-
բանական այդ աղոթքի բաղկացուցիչ
տարրերն էին սաղմոսերգությունը, օրհներ-
գությունը, ա. գրոց ընթերցումն ու մեկնու-
թյունը, քրիստոնեական վարդապետությու-
նը: Պողոս առաքյալն իր քարոզած փոքրա-
սիական եկեղեցական համայնքներին թե-
լադրում էր «սաղմոսիւք, և օրհնութեամբք
և երգովք հոգևորօք և շնորհօք օրհնել ի
սիրտս ձեր զԱստուած» (Կողս. Գ 16, Եփես.
Ե 19, Ա. Կորթ. ԺԴ. 26):

Հասարակաց աղոթքի կամ պաշտամուն-
քի ստաբիլական այս կառուցվածքը շարու-
նակվեց մասնաճյուղ դարերում, հասնելով

գարգացման նոր ձևերի և կերպերի: Այսպիսով, ժամերգության բաղկացուցիչ տարրերը կազմեցին **քահանայի աղոթքը** կամ **մատթանքը**, **սարկավագի՝ քարոզը** կամ **հորդորը**, փոխառացների՝ **սաղմոսը** և դպիրների՝ **երգն** ու **շարականը**:

Մինչև Դ դարը եկեղեցական ընդհանուր մատենագրության մեջ ճշտված ու հաստատված վկայություններ չկան հասարակաց աղոթքի ժամերի, թվերի և ամենօրյա կատարման մասին:

Կարծվում է, որ ամենօրյա հասարակաց աղոթքի սովորությունը մուտք է գործել Դ դարում, վաճառական կյանքի կազմակերպության ուժեղացմամբ և ազդեցությամբ:

Մեր եկեղեցու ժամերգության կամ հասարակաց աղոթքի կազմավորումն ու կանոնադրությունը վերագրվում են **ս. Սահակին և ս. Մեսրոպին**: Կորյունը վկայում է, որ ս. Մեսրոպը վաճառական եղբայրանոցներ էր հաստատում և նրանց համար կանոններ էր սահմանում «պատրաստել զսիրտս **երգովք հոգևորոք** ի փառս և ի գովութիւն Աստուծոյ... անդ կրթութիւն քաղցրուսոյց ընթերցումածոց հոգեպատում գրոց, անդ՝ քաջալերութիւն յորդորական **վարդապետութեան**... անդ՝ **աղօթք** աղերսալիք»: Խորենացին ս. Սահակի համար վկայում է. «սա ամենայն առաքինութեանց հարցն նմանեալ... մշտնջենաւոր պաշտամամբ կատարէր զկանոնսն՝ որպէս զայն որ յանապատսն էին»: Ըստ Եղիշեի վկայության Վարդանանց պատերազմի օրերին, բոլորի շրթների վրա «**Սաղմոսք** էին նոցա մոմունջք երգոց և **ընթերցումածք** սուրբ Գրոց կատարեալ ուրախութիւնք»:

Մինչև Դ դարը քրիստոնեական ընդհանուր եկեղեցու պաշտամունքի մեջ հիշվում են աղոթքի **առավոտյան**, **երեկոյան** և **երրորդ, վեցերորդ, իններորդ ժամերը**, (Ծառու ժամը):

Ս. Սահակի կանոնների մեջ հիշվում են «պաշտամունքն տուրնջեան և գիշերոյ»: Փարպեցին ավելացնում է նաև «ի ժամ երեկոյին»: Այս երեք ժամերգությանց աղոթքներն ու քարոզները գրել են ս. Սահակն ու Հովհ. Մանդակունին: Նույն դարում հայ եկեղեցում կատարվում էին նաև առանձին-առանձին **երրորդ, վեցերորդ և իններորդ** ժամերի հասարակաց աղոթքները, որով հայ եկեղեցում Ե դարում կատարվում էին վեց աղոթքներ կամ ժամերգություններ՝ իրենց սահմանված և նշանակված ժամերին:

Օձնեցին Ը դարում հիշատակում է վեց աղոթածամեր՝ զանց առնելով արևազալի և խաղաղականի ժամերը:

Մեր մատենագրության մեջ առաջին դարձյալ Ը դարում, Ստեփանոս Սյունեցին է, որ հիշում է հասարակաց աղոթքի ու ժամերի անվանումներն ու դասակարգումը ըստ հետևյալի.

ա) **գիշերային փառատորութիւն կամ գիշերոյն աղօթք**, բ) **առաւօտին աղօթքն**, գ) **առաւօտուն աղօթքն** որ ընդ արևազալսն, դ) **երրորդ ժամու աղօթքն**, ե) **հասարակօրեայն ժամ**, զ) **իններորդ ժամու աղօթքն**, է) **երեկոյին աղօթքն**, և ը) **հանգստեան ժամու աղօթքն** (մեր այժմու «խաղաղական»-ը):

Հետագա դարերում ժամերգության կարգավորության հարցով զբաղվել են նաև այլ հմուտ և ծիսագետ հոգևորականներ՝ իրենց «կարգ մեկնութեանց ժամու աղօթից» և նման այլ աշխատություններով, ինչպիսիք են՝ Խոսրով Աճնացին, Անանիա Մոկացին, Ներսես Շնորհալին, Ներսես Լամբրոնացին, Մովսես Երզնկացին, Գրիգոր Սկևռացին, Գրիգոր Տաթևացին և ուրիշներ:

Մեր այժմյան ժամագրքի վերնագրերի վերջնական ձևը տվել է Տաթևացու աշակերտ Թովմա Մեծոփեցին, ըստ հետևյալի.

«Վարդատորութիւն հասարակաց աղօթից Հայաստանեայց. Եկեղեցոյ որ կատարի ի մէջ **գիշերի, առաւօտու ժամուն, արևազալի ժամուն, երրորդ ժամուն, վեցերորդ ժամուն, իններորդ ժամուն, երեկոյի ժամուն, խաղաղականի ժամուն** և **հանգստեան ժամուն**»:

Մեր ժամագրքի հոգեթուլ, հոգեզմայլ ժամերգություններից մեկը, իր կրոնաբույր հղացումով, բանաստեղծական արտահայտչական միջոցներով, բովանդակությամբ և խորհրդով՝ **արևազալի** ժամերգությունն է:

Արևազալի ժամերգության աղոթքները Օձնեցին վերագրում է Եզր կաթողիկոսին (630—641), «աղօթք իբրև արժանի լինել մեծի առաւօտի լուսոյ ծագմանն» (Եղիշե արքեպ. Դուրյան, Պատմութիւն հայ մատենագրութեան, Երուսաղեմ, 1933, էջ 137): Օրմանյան սրբազանն էլ վկայում է, որ Եզր կաթողիկոսը «առաւօտեան ժամերգութեան վերջին մասը զատելով՝ հատուկ արևազալի ժամերգություն մը կազմելը Եզրի կարգադրությամբ եղած է» (Ազգապատում, հատ. Ա, 1912, Կ. Պոլիս, էջ 701):

Հետագայում Շնորհալին է նոխացնում արևազալի ժամերգությունը, նոր և զմայլելի շարականներով, որոնք ոչ միայն ինքնատիպ արտահայտությունն են նրա կրոնական ներշնչումների, հավատքի, այլ նաև գոհար զարդերն են մեր Ծարակնոցի, լուսաբաղձ հոգու թրթռումներ, որոնց մեջ, արդարև, «ո՛չ՝ քերթողական աշխույժն է որ

լակսի և ոչ ալ երկյուղած սրտերու խոնկ զգացողականը» (Դուրյան, էջ 51):

Ս Արևագալի շարականների գլխավոր թեման լույսն է: Բնական ու իմանալի Լույսին լիիրված հոգևոր այդ տաղերը իրենց ինքնատիպ, քնարական շնչով, զգացմունքների ըրմությամբ, գաղափարների վսեմությամբ և արտահայտչական ձևերի բազմազանությամբ հոյակապ լուսերգություններ են, քնարական բարձր թոփաքներ:

«Աստուած լոյս է» (Ա. Հովհ. Ա. 5), Հիմուն՝ «աշխարհի Լոյս» (Հովհ. Ը. 12), իսկ Ռիստունյանները՝ «որդիք Լուսոյ» (Ա. Թեալ. Ե. 5): Քրիստոսը աշխարհ է գալիս իրապես «Լոյս ի յայտնութիւն հեթանոսաց», Լոյս ի լուսոյ ծագում, Արեգական արդար, Իմանալի լոյս, Աղբիւր լուսոյ», հերքելու հոգիի և անգիտության խավարը և լուսավորելու մարդկանց հոգիները, «ի հօրէ ծագեալ, լուսաւորել զարարածս, Արդարութեան լրեգակն, Տէր, փառք քեզ» (շարական): Եւ ի՞նչ է՝ Քրիստոսը, «արկողն զլոյս որպէս լոյս» է՝ Նա ոչ միայն լոյս է, այլ նաև կրակ, արքայազարդող, սրբացնող «հուրն կենդանի», որ իր աստվածային լույսի կրակը տալիս է ողջ տիեզերքի վրա՝ այն լուսաւորելու համար:

Այս իմաստով քրիստոնեությունը առաջնապես Լույսի կրոնքն է, իմանալի Լույսի, շմարտության, կյանքի պաշտամունքը:

Պատահական չէ երբեք, որ քրիստոնեական եկեղեցիները շինվել են դեպի արևելք, սկ հավատացյալները աղոթում են երեսները դեպի լույս, դեպի աղոթարան դարձած, դեպի «լուստ միստիկական աշխարհը, որտեղից ծագում է արեգակը, որի վրա՝ նույնանում է Քրիստոսը՝ «արդարութեան արեգակը»» (Մ. Արեղյան, Հայոց հին լուսավորության պատմություն, Ա. գիրք, Երևան, 1944, էջ 501):

Մեր շարականների, հոգևոր երգերի մեծ մասը, և «առանձնապես Աստվածածնի և

մասամբ տերունական շարականների, կազմված են այս լուստ հավատալիքների վրա» (Մ. Արեղյան, նույն տեղում, էջ 502):

Ա Շնորհալիկ մեր մեծագույն լուսերգական քնարերգակ բանաստեղծն է, որ իր սքանչելի լուսերգություններով, այդ թվում «Առաւօտ լուսոյ», «Աշխարհ ամենայն», «ՂԱրևելից», «Լոյս», «Ծանապարհ» հոգևոր տաղերով, «երածշտական երգօք» բարեգարդել, պայծառացրել է մեր Ժամագիրքն ու Ծարակնոցը, մեծ վայելչություն հաղորդելով մեր եկեղեցական աստվածապաշտությանը, որովհետև «ազդումն երածշտական եղանակին... ընդոստոցեալ զարթոցանէ զմիտս ամենեցուն առ ի տենչումն շնորհաց» (Ներսես Լամբրոնացի):

Որքա՛ն թելադրական, սրտատույզ ու կրոնազգաց է առավոտյան պահը, երբ հավատացյալը «սթափեալ վերստին ի ննջմանէ ծանրութեան, ամենազգաստ արթնութեամբ, հոգեմորոգ զուարթութեամբ», աղոթքը շրթներին՝ «Տէր, եթէ զշրթունս իմ բանաս», աղոթարանի առաջ կանգնած, հոգով վերանալով «լուստ միստիկական աշխարհը», դիմում է «լուսոյ Առաւօտին», «արդար Արեգակին», որ իր հոգում էլ ծագի իմանալի, պայծառ լույսը:

«Լո՛յս, արարի՛չ լուսոյ, առաջի՛ն լոյս,
Բնակեալդ ի լոյս անմատոյց, Հայր
երկնաւոր,
Ի դասուց լուսեղինաց օրհնեալ,
Ի ծագել լուսոյ առաւօտոս
Ծագեա ի հոգիս մեր զլոյս քո իմանալի»:

Առավոտյան աղոթքի այս սրբազան պահը հավատացյալի հոգու, մտքի, զգացմունքների պայծառակերպության ժամն է:

Երանի նրանց, որոնք աղոթել գիտեն, և որոնց հոգում հանապազ պայծառ է, իմանալի լույսը, ճանապարհ ու կյանք Քրիստոսը, և որոնք ամեն արևածագին աղոթքի կանգնած սպասում են, որ ծագի իրենց «հոգւոյն պայծառ Կիրակին»:

